Հաստատվել է
ՀԲԿ ծրագրի իրականացման
կոնսորցիումի անդամների կողմից
Աղվերան, 28 հունիսի 2019թ.

_____
Գագիկ Վարդանյան
ՀԲԿ քարտուղար

ՊԼԱՆ

ԵՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌԱՌՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ «ՀԱՅԿԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ» (ՀԱՄԱ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ (2019թ.)

Կառուցվածք

Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի (ղեկավար կազմակերպություն), Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, Հայաստանի համայնքների միության, «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի, «Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի, ինչպես նաև «Ագորա Սենթրալ Յուրրփ» չեխական ՀԿ-ի համատեղ կոնսորցիումով իրականացվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում տրամադրված ենթադրամաշնորհների շրջանակներում իրականացվող «Հայաստանի ՓՄՁ ոլորտի արդյունավետ զարգացման նոր ռազմավարություն» ծրագրի շրջանակներում ստեղծված «Հայկական բիզնես կոալիցիա» ՔՀԿ կոալիցիայի (համա)ֆինանսավորման ապահովման և ֆինանսների հայթայթման պլանը բաղկացած է հետևյալ բաժիններից.

Բովանդակություն

1. *Ներածություն*
2. *Ծրագրի մասին*
3. *ՀԲԿ ֆինանսավորման ապահովման և ֆինանսների հայթայթման միջոցառումների և գործողությունների ծրագիր*
4. *Հնարավոր դոնոր կազմակերպությունների նախնական ցանկ*
5. *Ամփոփում*
6. *Լրացուցիչ*
7. *«Հայաստանի ՓՄՁ ոլորտի արդյունավետ զարգացման նոր ռազմավարություն» ծրագրի Կոնսորցիումի անդամ կազմակերպությունների կոնտակտային տվյալներ*

1. Ներածություն

Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի (ղեկավար կազմակերպություն), Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, Հայաստանի համայնքների միության, «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի, «Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի, ինչպես նաև «Ագորա Սենթրալ Յուրրփ» չեխական ՀԿ-ի համատեղ կոնսորցիումով իրականացվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում տրամադրված ենթադրամաշնորհների շրջանակներում իրականացվող «Հայաստանի ՓՄՁ ոլորտի արդյունավետ զարգացման նոր ռազմավարություն» ծրագրի շրջանակներում ստեղծված «Հայկական բիզնես կոալիցիայի» (ՀԲԿ) (համա)ֆինանսավորման ապահովման և ֆինանսների հայթայթման պլանը հանդիսանում է ծրագրի կարևորագույն փաստաթղթերից մեկը, որի իրականացման միջոցով նախատեսվում է ապահովել Ծրագրի 10 տոկոս համաֆինանսավորումը:

Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 25.000.000 ՀՀ դրամ, որից «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրից հայցվում է 22.500.000 ՀՀ դրամ, իսկ դիմողի ֆինանսական ներդրման չափը 2.500.000 ՀՀ դրամ է, որը կազմում է ծրագրի ընդհանուր արժեքի 10 տոկոսը և նախատեսվում է ապահովել Կոնսորցիումի անդամներիների և այլ աղբյուրների համաֆինանսավորման միջոցով:

ՀԲԿ համաֆինանսավորման ապահովման և ֆինանսների հայթայթման պլանը քննարկվել է Ծրագիրն իրականացնող կազմակերպությունների կոնսորցիումի, Ծրագրի աշխատակազմի անդամների ինչպես նաև ՀԲԿ անդամների հետ, որից հետո ներառվել են բոլոր կարծիքները, առաջարկություններն ու դիտողությունները: Վերջնականացնելուց հետո պլանը 28/06/2019թ. հանդիպման ժամանակ ներկայացվել է կոնսորցիումի անդամներին և ՀԲԿ քարտուղարության աշխատակազմին, նույն օրը այս պլանը հաստատվել է համապատասխան արձանագրությամբ:

Նախատեսվում է, որ ՀԲԿ կոալիցիայի համաֆինանսավորման ապահովման և ֆինանսների հայթայթման պլանը կվերանայվի յուրաքանչյուր 3 ամիսը մեկ անգամ կամ ըստ անհրաժեշտության՝ ավելի կարճ ժամկետներում:

2. Ծրագրի մասին

2018 թվականի ապրիլ ամսին Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի (ղեկավար կազմակերպություն), Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, Հայաստանի համայնքների միության, «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի, «Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի, ինչպես նաև «Ագորա Սենթրալ Յուրըփ» չեխական ՀԿ-ի համատեղ կոնսորցիումով իրականացվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրիրը Հայաստանի ՔՀԿ-ների համար հայտարարել էր ծրագրի շրջանակներում ծրագրային 9 թիրախ ոլորտներում ՔՀԿ-ների կոալիցիաների (ցանցերի) համար հանրային քաղաքականությունների բարելավման, ջատագովության և մշտադիտարկման ենթադրամաշնորհների մրցույթ:

«Շիրակի առևտրաարդյունաբերական պալատ» (ՇԱԱՊ) հկ-ն, կոնսորցիումի անդամ իր գործընկերների՝ «Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամի» (ՔԶՀՀ), «Հայաստանի սոցիալական ձեռնարկությունների ասոցիացիայի» (ՀՍԶԱ), «Տարածքային բիզնես կենտրոնի» (ՏԲԿ), Բիզնեսի աջակցման գրասենյակ հասարակական կազմակերպության, «Ազդեցության գործարար ակումբ» (ԱԳԱ), «Գործարարության աջակցման գրասենյակ» (ԳԱԳ) հետ «Հայաստանի ՓՄՁ ոլորտի արդյունավետ զարգացման նոր ռազմավարություն» (“New SME Development Strategy for Armenia”) անվանումով ծրագրային հայտ են (այսուհետ՝ Ծրագիր) ներկայացրել նշված ենթադրամաշնորհային մրցույթի «Բիզնես» ոլորտին և հաղթել են: Ծրագրի իրականացումը ղեկավարվում է «Շիրակի առևտրաարդյունաբերական պալատ» (ՇԱԱՊ) հկ կողմից:

Ծրագրի հիմնական և առանձնահատուկ նպատակները համապատասխանում են ենթադրամաշնորհային ծրագրի հիմնական (հանրային քաղաքականությունների գործընթացի վրա ՔՀԿ-ների ազդեցության ուժեղացում) և առանձնահատուկ (կոալիցիաների կառուցման գործում ՔՀԿ-ների կարողությունների ուժեղացում, քաղաքականությունների շուրջ կենտրոնական իշխանությունների և տեղական ինքնակառավարման մարմինների, գործընկերների հետ կառուցողական ու ռազմավարական փոխգործակցություն) նպատակներին:

Ծրագրի հիմնական նպատակն է՝ մշակել և ՀՀ կառավարությանը ներկայացնել ՓՄՁ ոլորտի զարգացման նոր՝ 2019-2021թթ ռազմավարության լայնորեն քննարկված, հիմնավորված և մասամբ փորձարկված նախագիծ, որն էական

նշանակություն կունենա Հայաստանում ՓՄՁ ոլորտի հետագա զարգացման արդյունավետ կազմակերպման համար: Այդ նպատակով ծրագիրը թիրախավորում է ՓՄՁ, ինչպես նաև արագորեն աճող նոր ենթաոլորտի՝ սոցիալական ձեռներեցության (ՍՁ) հետ առնչվող առկա էական խնդիրներին, մանսնավորապես՝

1. Հայաստանի ՓՄՁ ոլորտի զարգացման իրատեսական և ժամանակակից մոտեցումներով նոր ռազմավարության բացակայությունը,
2. Ոլորտում ընթացող գործընթացներում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և Բիզնես ասոցիացիաների մասնակցության թույլ մեխանիզմները,
3. Գործարարների շահերի պաշտպանի (Բիզնես Օմբուդսմեն) ինստիտուտի ներդրման շուրջ բազմակողմանի երկխոսության իրականացման անհրաժեշտությունը,
4. Բիզնեսի, ներառյալ նաև սոցիալական ձեռնարկատիրության հարցերով ընդհանուր կրթության պետական քաղաքականության էական բարելավման, ուսումնական ժամանակակից ծրագրերի մշակման և իրականացման անհրաժեշտությունը:

Ստեղծված կոնսորցիումը վերլուծել է ՓՄՁ ոլորտի զարգացման 2016-2018թթ համար ՀՀ կառավարության ընդունած ռազմավարության արդյունքները, բացահայտել թերություններն ու խնդիրները, ուսումնասիրել է միջազգային համապատասխան փորձը: Մշակվում և առաջարկվում են նաև մեխանիզմներ ՓՄՁ նոր ռազմավարության հետագա իրագործման և մշտադիտարկման կազմակերպման համար: Ծրագրի շրջանակներում ստեղծված ՓՄՁ երկխոսության հարթակումմ, նաև կառավարության ներկայացուցիչների հետ կազմակերպվող հաղորդակցման և հանդիպումների միջոցով մշակվում են կարևոր առաջարկություններ ինչպիսիք են՝

- բիզնես հաշտարարի ինստիտուտի ներդրում,
- ՓՄՁ ոլորտի ազդեցության գնահատման ինստիտուտի բարելավում,
- գործարարությանն անհրաժեշտ ֆինանսական միջոցների հասանելիության նոր մեխանիզմների ներդրում,
- ձեռնարկատիրական ընդհանուր կրթության բարելավում,
- սոցիալական ձեռնարկատիրության հայեցակարգի ընդունում,
- բիզնեսում գենդերային հավասարության և հավասար հնարավորությունների խթանում:

Ծրագրի առանձնահատուկ նպատակներն են.

- Ստեղծել և իրականացնել ՓՄՁ երկխոսության հարթակ և սոցիալական ձեռներեցների հաղորդակցման ֆորում՝ օնլայն և օֆլայն տարբերակներով, շահագրգիռ բոլոր կողմերի՝ այդ թվում բիզնես անդամություն ունեցող և բիզնեսին աջակցող ՔՀԿ-ների, սոցիալական ձեռներեցների, պետության համապատասխան գերատեսչությունների, միջազգային կազմակերպությունների և ոլորտի փորձագետների ներգրավմամբ: Այս նախաձեռնության նպատակն է աջակցել ՓՄՁ ոլորտի մասնակիցների ակտիվ հաղորդակցմանը, հաջողությունների ընդօրինակմանը, խնդիրների բացահայտմանը, դաշտի առավել արդյունավետ կարգավորման լուծումների որոնմանը և ջատագովության խթանմանը:

- Իրականացնել բիզնես հաշտարարի առաջարկվող ինստիտուտի փորձնական (պիլոտային) նախագիծ Գյումրի և Գավառ քաղաքներում, այդ նպատակով նաև կգործի թեժ գծի հեռախոսահամար՝«Թեժ բիզնես կապ», որը օպերատիվ կապ կստեղծի ոտնահարված իրավունքներով գործարարի և ծրագրում բիզնես հաշտարարի փորձնական գործառություններ իրականացնող փորձագետների հետ: Բացի այս կօգտագործվեն արդեն առկա գործիքները (օրինակ՝ BizProtect կայքը) առաջացած խնդիրներին օպերատիվ լուծումներ տալու համար: Փորձնական նախագծի արդյունքները կներկայացվեն և կքննարկվեն ՓՄՁ երկխոսության հարթակում՝ արդյունքում ճշգրտելով բիզնես հաշտարարի ինստիտուտի ներդրման մասով ՓՄՁ ռազմավարության մեջ ներկայացվելիք առաջարկությունը:

- Ներկայացնել ձեռնարկատիրական կրթության քաղաքականության, մասնավորապես նաև սոցիալական ձեռնարկատիրության մասով կրթության ուսումնական ծրագիր/պլան(curriculum) և մեթոդաբանություն, այդ թվում նաև հեռահար ուսուցման և նորարարական հնարավորությունների կիրառմանն ուղղված առաջարկություններ: Այդ նպատակով նախագծել և դպրոցներում ու միջին մասնագիտական հաստատություններում իրականացնել ձեռնարկատիրական կրթության մշտադիտարկում, մշակել սոցիալական ձեռներեցության կրթական բովանդակություն՝ հիմնվելով ՀՍՁԱ կրթական բազայի, այդ թվում նաև էլեկտրոնային ուսուցման հարթակի հնարավորությունների վրա, իրականացնել դրանց նախնական փորձարկումը Գավառում, Երևանում և Գյումրիիում՝ մեկական հանրակրթական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում: ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ համատեղ հիմնել

սոցիալական ձեռներեցության կրթական պլատֆորմ: Արդյունքները քննարկել ՓՄՁ երկխոսության հարթակում:

Ծրագրի մշակման համար հիմք է հանդիսացել քաղաքականությունների ձևավորման և մշտադիտարկման ոլորտում Կոնսորցիումի հավաքական փորձի օգտագործման և կոալիցիա ստեղծելու անհրաժեշտությունը:

Ծրագրի համախոհներն են հանրապետական և մարզային մակարդակով գործունեություն ծավալող բիզնես կազմակերպությունները, բիզնես անդամություն ունեցող, բիզնեսին և ՔՀԿ-ներին աջակցող կառույցները, ՔՀԿ-ները, թիրախ ոլորտներում պետական և տեղական մարմինները:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ գործողությունները.

1) Ստեղծել ՓՄՁ երկխոսության ակտիվ հարթակ՝ շահագրգիռ բոլոր կողմերի (բիզնես անդամություն ունեցող և բիզնեսին աջակցող ՔՀԿ-ներ, պետության համապատասխան գերատեսչություններ, այդ թվում Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը, ՊԵԿ, ԿԳՆ, միջազգային կազմակերպություններ, ոլորտի փորձագետներ) ներգրավմամբ:
2) Բիզնես հաշտարարի ինստիտուտի ներդրման նպատակով առաջարկվող մեխանիզմի պիլոտային փորձարկման իրականացում
3) Ձեռնարկատիրական կրթության քաղաքականության բարելավման նպատակով աշխատանքների իրականացում:

Ծրագրային գործողությունները լուսաբանվում են ՀԲԿ և քարտուղարության ծրագրի կայքէջերի (abcoalition.am և cdpf.am), «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի կայքի, iravaban.net անկախ լրատվական կայքի և այլ ԶԼՄ-ների կողմից:

Ծրագիրը մեկնարկել է 2018 թվականի հունիսի 19-ից 12 ամիս տևողությամբ:

3. ՀԲԿ ֆինանսավորման ապահովման և ֆինանսների հայթայթման միջոցառումների և գործողությունների ծրագիր

Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում տրամադրված «Հայաստանի ՓՄՁ ոլորտի արդյունավետ զարգացման նոր

ռազմավարություն» ծրագրի շրջանակներում ստեղծված «Հայկական բիզնես կոալիցիա» կոալիցիայի հետագա ֆինանսավորման և ծրագրային գործունեության ապահովման նպատակով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ներգավելու նպատակով կազմվել է հնարավոր դոնոր կազմակերպությունների *նախնական ցանկ* և *միջոցառումների ու գործողությունների նախագիծ*:

Ցանկում ընդգրկվել են Հայաստանում ինչպես նաև արտասահմանյան երկրներում գործող միջազգային դոնոր կազմակերպություններ, արտասահմանյան երկրների խոշոր հիմնադրամներ, ինչպես նաև ոլորտում ակտիվ այլ դոնոր կազմակերպություններ, որոնք գործունեություն են ծավալում Անդրկովկասյան տարածաշրջանում կամ Հայաստանում և հետաքրքրված են համագործակցել տեղական կազմակերպությունների հետ, ցանկանում են իրականացնել համատեղ ծրագրեր կամ ֆինանսավորել այլ իրականացվող ծրագրերի բաղադրիչներ: Ցանկը պարբերաբար թարմացվելու և ավելացվելու է:

Կապ է հաստատվելու համանման ծրագրեր իրականացնող գործող կոալիցիաների և կոնսորցիումների հետ, որոնք կհետաքրքրվեն «Հայաստանի ՓՄՁ ոլորտի արդյունավետ զարգացման նոր ռազմավարություն» ծրագրի գործողությունների իրականացմամբ:

Այս նպատակով նախատեսվում է նաև քննարկել Հայկական սփյուռքի ներգրավման հնարավորությունները, որոնք հակված են անմիջականորեն աշխատել հասարակական կազմակերպությունների հետ որոշակի ֆինանսական օժանդակություն հատկացնելով ՔՀԿ-ներին ժողովրդավարական արժեքները զարգացնելու և ամրապնդելու, ինչպես նաև քաղաքականությունների ձևավորման, հանրային վերահսկողության, ՔԿՀ-ների մասնակցությունն ու ներգրավվածությունը կառավարության գործունեության համապատասխան ոլորտներում ՔՀԿ-ների և ՔՀԿ կոալիցիաների կարողությունները ուժեղացնելու համար:

Այս նպատակները իրականացնելու համար աշխատանքներ են տարվում հետևյալ ուղղություններով.

Կազմվելու է ֆինանսական միջոցների հայթայթման խումբ՝ ՀԲԿ կառավարման խորհրդի անդամների, ՀԲԿ քարտուղարության, հասարակական կապերի պատասխանատուի, ինչպես նաև այս հարցերում փորձ և հնարավորությունների ունեցող ՀԲԿ այլ անդամների ներկայացուցկիչների ներգրավմամբ: Ենթադրվում է, որ այդ խմբի աշխատանքներին անմիջականորեն կմասնակցեն նաև «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի և վերջինիս կողմից ղեկավարվող կոնսորցիումի ներկայացուցիչները: Աշխատանքների կկորդինացվեն ՀԲԿ կառավարման խորհրդի նախագահի կողմից և պարբերաբար հիմունքներով

կկատարվեն ֆինանսական միջոցների հայթայթման աշխատանքներ, հետևյալ ուղղություններով.

1. Հայաստանում և արտերկրներում, գործող, ինչպես նաև ոլորտում ակտիվ դոնոր, միջազգային և արտասահմանյան կազմակերպություններին՝ Ծրագրի (կոալիցիայի) համաֆինանսավորման նոր հնարավորությունների որոնում և հայտնաբերում,

2. Միացյալ Նահանգներում, Եվրոպական Միությունում, Ռուսաստանի Դաշնությունում և այլ երկրներում բնակվող հայ համայնքին՝ ֆինանսավորման նոր հնարավորությունների որոնում և հայտնաբերում,

3. Հայաստանում գործող բիզնեսի ներկայացուցիչներին՝ ֆինանսավորման նոր հնարավորությունների որոնում և հայտնաբերում,

4. ՀՀ կառավարության, կառավարության ծրագրերով նախատեսված ՔՀԿ սեկտորին տրամադրվող դրամաշնորհային հնարավորությունների օգտագործում,

5. Առցանց ֆինասավորման աղբյուրների որոնում և հայտնաբերում,

6. Այլ աղբյուրների որոնում և հայտնաբերում:

4. Հնարավոր դոնոր կազմակերպությունների նախնական ցանկ

Հնարավոր դոնորների նախնական ցանկը նշված է ստորև բերված Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

1.	The European Bank for Reconstruction and Development https://www.ebrd.com/home
2.	World bank https://www.worldbank.org/
3.	Asian Development bank https://www.adb.org/
4.	United Nations Democracy Fund https://www.un.org/democracyfund/
5.	U.S. Department of State, Bureau of DRL https://www.grants.gov/web/grants/view-opportunity.html?oppId=299519
6.	The Wallace Global Fund http://wgf.org/ contact@wgf.org
7.	The US Embassy Democracy Commission Small Grants Program Competition Ժողովրդավարության հանձնաժողովի փոքր դրամաշնորհների ծրագրի մրցույթ https://armenia.usembassy.gov/demcom.html
8.	National Endowment for Democracy (NED) proposals@ned.org INFO@NED.ORG<INFO@NED.ORG>
9.	The German Marshall Fund of the United States (GMF) Project proposals must be sent to BlackSeaTrust@gmfus.org
10.	Norwegian Helsinki Committee
11.	ENI CBC Black Sea Basin Joint Operational Programme 2014-2020
12.	Civitas Georgica
13.	DEMAS չեխական կազմակերպություն
14.	International Society for Human Rights (ISHR)
15.	Tiri հիմնադրամ
16.	“People in Need” չեխական կազմակերպություն
17.	European Council on Refugees & Exiles (ECRE)
18.	**Ցանկը պետք է լինի շարունակական**

Օն-լայն ֆինասավորման հնարավոր աղբյուրները նշված են ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

1.	http://www.insidephilanthropy.com/
2.	https://www2.fundsforngos.org/
3.	https://www.ihrfg.org/funder-directory-search
4.	http://www.insidephilanthropy.com/funding-for-global-security/sigrid-rausing-trust-grants-for-human-rights.html
5.	

ՀՀ-ում դոնորների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրող կայքերը և պետական ֆինանսավորում ստանալու աղբյուրները բերված են Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

1.	www.hkdepo.am
2.	www.civilsociety.am
3.	www.erit.am/programs
4.	www.procurement.am
5.	

Այս ուղղությամբ աշխատանքները շարունակվում են:

**** Ցանկերը ենթական են փոփոխման և լրացման:*

5. Ամփոփում

Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «իրականացվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում տրամադրված ենթադրամաշնորհների շրջանակներում իրականացվող «Հայաստանի ՓՄՁ ոլորտի արդյունավետ զարգացման նոր ռազմավարություն» ծրագրի շրջանակներում ստեղծված «Հայկական բիզնես կոալիցիա» ՔՀԿ

կոալիցիայի համաֆինանսավորման (համա)ֆինանսավորման ապահովման և ֆինանսների հայթայթման պլանը նախատեսվում է 2019 թվականի համար, որը նախատեսվում է վերանայել երեք ամիսը մեկ անգամ: Ծրագրի համաֆինանսավորման ապահովման և ֆինանսների հայթայթման պլանի իրականացման համար անհրաժեշտ է.

- ստեղծել, վարել և պարբերաբար թարմացնել հնարավոր դոնորների և ֆինանսավորողների բազան,
- ստեղծել և պարբերաբար թարմացնել ֆինանսական միջոցների հայթայթման համար անհրաժեշտ մարքետինգային գործիքներ,
- դարձնել կայուն և զարգացնել պոտենցիալ դոնորների և ֆինանսավորողների հետ հարաբերությունները (նամակագրության, հանդիպումների, հաղորդակցման ժամանակակից տեխնոլոգիաների, այդ թվում սոցիալական ցանցերի հնարավորությունների (Սքայփ, ՖԲ, Վայբեր և այլն) օգտագործման միջոցով ,
- ծրագրի շրջանակներում կազմակերպել ֆինանսական միջոցների հայթայթման հարցերով զբաղվող թիմի անդամների վերապատրաստումը,
- մշակել այլ անհրաժեշտ փաստաթղթեր, իրականացնել այլ անհրաժեշտ գործողություններ և աշխատանքներ:

6. Լրացուցիչ

1 Ֆոնդահայթայթման պլանի համար անհրաժեշտ այլ գործողություններ

1 Թվերի հաշվարկ

Ա) առաջիկա տարվա համար նախատեսվող ընդհանուր ծախսեր՝ 8000000 (ութ միլիոն) ՀՀ դրամ

Բ) ծախսերի համար ապահովված գումար՝ 0

Գ) մնացած անհրաժեշտ գումար, որը պետք է հայթայթել (Ա և Բ կետերում նշված գումարների տարբերությունը)՝ 8000000 (ութ միլիոն) ՀՀ դրամ

2 Ընթացիկ տարվա ցուցանիշները և հաջորդ տարվա կանխատեսումներ[1]

[1] http://www.fundraising123.org/files/KleinNP911_Fund_Plan_Worksheet.pdf

Ընթացիկ տարում ՀԲԿ գործունեության հետագա ֆինանսավորման նպատակով ծրագրերի ֆինանսավորման առաջարկներ են ուղղվել հետևյալ դոնոր կազմակերպություններին՝ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանություն, ՀՀ-ում Բրիտանիայի դեսպանություն, NED: Առաջին երկու կազմակերպություններիս ստացվել են ֆինանսավորման մերժման պատասխաններ, իսկ NED-ի դեպքում՝ պատասխանը կստացվի ս.թ. սեպտեմբերի 6-ից հետո:

7. «Հայաստանի ՓՄՁ ոլորտի արդյունավետ զարգացման նոր ռազմավարություն» ծրագրի Կոնսորցիումի անդամ կազմակերպությունների կոնտակտային տվյալներ

1. *«Շիրակի առևտրաարդյունաբերական պալատ» (ՇԱԱՊ),*
   Հասցե՝ ք. Գյումրի, 3101, Շարա Տալյան 9/բ
   Հեռ.՝ +374 93 195434
   Էլ. փոստ՝ shirakcci@gmail.com

2. *«Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամ» (ՔԶՀՀ),*
   Հասցե՝ Չարենցի փ. 1, սենյակ 208, Երևան 0025
   Հեռ., +374-96-419657
   Էլ. փոստ՝ gagik.vardanyan@cdpf.am
   www.cdpf.am

3. *«Հայաստանի սոցիալական ձեռնարկությունների ասոցիացիա» (ՀՍՁԱ),*
   Գործունեության հասցե՝ ք. Սևան, Նաիրյան 164, 3-րդ հարկ,
   Հեռ. +37499085814, +37460462305,
   Էլ.փոստ՝ asea@se.center

4. *«Տարածքային բիզնես կենտրոն» բիզնեսի աջակցման հասարակական* կազմակերպություն (ՏԲԿ),
   Հասցե՝ ք. Գավառ, Գր. Լուսավորչի 3,
   հեռ. 096 175 849, 094 05 75 35, 0264 2 35 75
   Էլ. փոստ՝ anahit.shahzadyan@gmail.com,
   gbcngo@gmail.com

5. *«Ազդեցության գործարար ակումբ» (ԱԳԱ),*
   Գործունեության հասցե՝ Վ. Սարգսյան 10, 0010, Երևան
   հեռ. +37495112330,
   Էլ. փոստ՝ clubforimpact@gmail.com

6. *«Գործարարության աջակցման գրասենյակ»(ԳԱԳ)*
   Գործունեության հասցե՝ Վ. Սարգսյան 10, 0010, Երևան
   հեռ. +37411703370,
   Էլ. փոստ՝ info@bso.am

Սույն զեկույցը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամի կողմից իրականացվող «Հայկական բիզնես կոալիցիայի (ՀԲԿ) կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամը, և ***պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:***